ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԻՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N << *ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/2.1* >>

ք. Երևան <<21>> <<ապրիլի>> 2017թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա.Զալինյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և «Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Դանիելյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված բենզին <<ռեգուլյար>> /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ նրա կողմից նշված հասցեով /ներով/:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ << օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ **57870651** (հիսունյոթ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար վեց հարյուր հիսունմեկ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25.12.2017թ. :

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 4) և Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7 օրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծը: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	ք. Երևան, Պուշկինի 1 փող
ՀՀ ՖՆ աշխատակազմի	«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ
գործառնական վարչություն,	Հ/Հ 1660001996600100
Հ/Հ 900011000834	ՀՎՀՀ 02614085
ՀՎՀՀ 02631263	էլ. հասցե՝ tender@cps.am
	Հեռ. (010)540911, (010)526746
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
<< 21 >> << ապրիլի>> 2017թ. կնքված
N ***ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/2.1*** *ծածկագրով գնման պայմանագրի*

ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/Հ	Անվանում	Բնութագիր
1	Բենզին, ռեգուլյար	Արտաքին տեսքը՝ մաքուր և պարզ, օկտանային թիվը որոշված հետազոտական մեթոդով՝ ոչ պակաս 91, շարժիչային մեթոդով՝ ոչ պակաս 81, բենզինի հագեցած գոլորշիների ճնշումը՝ 45-ից մինչև 100 կՊա, կապարի պարունակությունը 5 մգ/դմ3-ից ոչ ավելի, բենզոլի ծավալային մասը 1 %-ից ոչ ավելի, խտությունը՝ 15 0 C ջերմաստիճանում՝ 720-ից մինչև 775 կգ/մ3, ծծմբի պարունակությունը՝ 10 մգ/կգ-ից ոչ ավելի, թթվածնի զանգվածային մասը՝ 2,7 %-ից ոչ ավելի, օքսիդիչների ծավալային մասը, ոչ ավելի՝ մեթանոլ-3 %, էթանոլ-5 %, իզոպրոպիլ սպիրտ-10%, իզոբուտիլ սպիրտ-10 %, եռաբութիլ սպիրտ-7 %, եթերներ (C5 և ավելի)-15 %, այլ օքսիդիչներ-10 %, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. նոյեմբերի 11-ի N 1592-Ն որոշմամբ հաստատված «Ներքին այրման շարժիչային վառելիքների տեխնիկական կանոնակարգի»:

- **Մատակարարումը՝ Կտրոնային:** Կտրոնի ուժի մեջ լինելու ժամկետը սահմանել առնվազն մեկ տարի՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:
- Ապահովել բոլոր կտրոնների միասնականության ճանաչումը ՀՀ և ԼՂՀ տարածքներում:
- Երևան քաղաքի յուրաքանչյուր վարչական շրջանում ունենալ առնվազն 2, ՀՀ յուրաքանչյուր մարզում՝ առնվազն 2, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում՝ Ասկերանի, Հադրութի և Մարտակերտի շրջաններում առնվազն մեկական բենզալցակայան կամ համապատասխան այլ բենզալցակայանների հետ կնքված պայմանագրեր՝ կտրոնով ապրանքի մատակարարումն իրականացնելու համար:
Բենզալցակայանների հասցեների ցանկը կցվում է:*

ԳՆՈՐԴ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
հ/հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 1 փող
«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ
հ/հ 16600001996600100
ՀՎՀՀ 02614085
էլ. հասցե tender@cps.am
հեռ. (010)540911, (010)526746

(ստորագրություն)
Կ.Տ

N	Լցակայանների անունը ըստ քաղաքների *		Հասցեն (քաղաք, ճանապարհ և այլն)	
1		Կենտրոն վարչական շրջան	Վարդանանց փող. հարող տարածք	շուրջօրյա
2			Մ.Հերացու փողոցի սկզբնամաս	շուրջօրյա
3			Մյասնիկյան 5 շ. հարող տարածք	շուրջօրյա
4		Աջափնյակ վարչական շրջան	Լենինականի 15/5	շուրջօրյա
5			Մազմանյան 5/1	շուրջօրյա
6			Երևան-Քասախ մայրուղի	շուրջօրյա
7		Արաբկիր վարչական շրջան	Կոմիտասի 60	շուրջօրյա
8			Կոմիտասի 35/6	շուրջօրյա
9			ք. Երևան, Հր. Մոչար 49/2	շուրջօրյա
10			ք.Երևան, Թբիլիսյան խճ. 1	շուրջօրյա
11			Աղբյուր Սերոբի 52/7	շուրջօրյա
12		Դավթաշեն վարչական շրջան	Երևան-Եղվարդ խճ. աջակողմյան մաս	շուրջօրյա
13			Սասնա Ծռեր 1/3	շուրջօրյա
14		Էրեբունի վարչական շրջան	Արցախի փող, 23/5	շուրջօրյա
15			Այվազովսկու 25	շուրջօրյա
16			Մովսես Խորենացի 165/2	շուրջօրյա
17		Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան	Սեբաստիայի 157	շուրջօրյա
18			Սեբաստիայի 110/1	շուրջօրյա
19			Իսակովի 27	շուրջօրյա
20			Բաբաջանյան 54	շուրջօրյա
21			Լենինգրադյան 31/1	շուրջօրյա
22		Նոր Նորք վարչական շրջան	Գյուլիքեղվյան 2/1	շուրջօրյա
23			Լյուքսեմբուրգի 36/3	շուրջօրյա
24			Թևոսյան 97/2	շուրջօրյա
25		Նորք Մարաշ վարչական շրջան	Արմենակյան 197	շուրջօրյա
26			Արմենակյան փողոց հարակից խաչմերուկ	շուրջօրյա
27		Շենգավիթ վարչական շրջան	Բագրատունյաց 67/1	շուրջօրյա
28			Իսակովի 11/1	շուրջօրյա
29			Արտաշիսյան 34	շուրջօրյա
30			Շիրակի 2/8	շուրջօրյա
31			Արշակունյաց 34	շուրջօրյա
32			Արշակունյաց 57	շուրջօրյա
33			ք.Երևան, Նորագավիթ 1-ին փող. 2/5	շուրջօրյա
34			Արշակունյաց 272	շուրջօրյա
35			Արշակունյաց 33	շուրջօրյա
36		Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	Դավիթ Անհաղթի փողոց	շուրջօրյա
37			Թբիլիսյան խճ.	շուրջօրյա
38		Ավան վարչական շրջան	Ռուբինյաց 58/1	շուրջօրյա
39			Աճառյան 5/1	շուրջօրյա
40		Նուբարաշենի վարչական շրջան	Նուբարաշենի 6 փողոց	շուրջօրյա
41			Այվազովսկի 25	շուրջօրյա
42		Աբովյան	ք.Աբովյան, Արզնու խճ. 1	շուրջօրյա
43			գ. Վերին Պտղնի «Բոյնի» տեղամաս	շուրջօրյա

44	Կոտայք	Չարենցավան	Ք. Չարենցավան Թումանյան փող. պատասխանատու՝ Գնել 077-00-17-03	շուրջօրյա
45		Հրազդան	ք.Հրազդան, Վանատուր թաղամաս	շուրջօրյա
46		Եղվարդ	Եղվարդի խճ. աջակողմյան մաս	շուրջօրյա
47			գ.Քասախ	շուրջօրյա
48	Արագածոտն	Աշտարակ	ք. Աշտարակ, Երևանյան 1/13 փող	շուրջօրյա
49		Ապարան	Ապարանի կենտրոնական մասում, Բաղրամյան 73ա	շուրջօրյա
50		Թալին	Սպանդարյան փող. 10 (հրշեջ ծառայությունից մի փոքր ներքև)	շուրջօրյա
51		Արագած	Երևան-Ապարան մայրուղի	շուրջօրյա
52	Շիրակ	Արթիկ	ք.Արթիկ Շահումյան 72	շուրջօրյա
53			ք.Արթիկ Շիրակացի 2/10	
54			ք.Արթիկ Սասունցի Դավթի 69	շուրջօրյա
55		Գյումրի	ք.Գյումրի, Վ.Սարգսյան 30/1,	շուրջօրյա
56			Տերյան 120	շուրջօրյա
57			ք.Գյումրի, Թբիլիսյան խճ. 42	շուրջօրյա
58			ք.Գյումրի, Երևանյան խճ. 173/1	շուրջօրյա
59			Խրիմյան Հայրիկ 55/1	շուրջօրյա
60		Ամասիա	գ. Ամասիա	շուրջօրյա
61	Գեղարքունիք	Մարտունի	Կամոյի փող.; բենզինի ցիստեռն (Ֆրունզ), Ավտոկայանի մոտ	շուրջօրյա
62		Սևան	Գեղարքունիքի մարզ Վարսեր գյուղ	շուրջօրյա
63			Սևան-Երևան մայրուղու խաչմերուկից հյուսիս-արևմ	շուրջօրյա
64		Գավառ	ք.Գավառ Սևան-Գավառ մայրուղու ձախ կողմ, Գավառ փողող մտնելիս պատասխանատու Սաշիկ	շուրջօրյա
65			Գավառ քաղաքի շուկայի հարևանությամբ 099-07-07-79 Արտյոմ	շուրջօրյա
66		Վարդենիս	Ք. Վարդենիս, Կոլցեոյի վրա պատասխանատու՝ Մի	շուրջօրյա
67		Ճամբարակ	ք. Ճամբարակ, Գետափնյա 41, հեռ. 091-90-25-00 Լ	շուրջօրյա
68	Տավուշ	Դիլիջան	Մաքսիմ Գորկի 54/2	շուրջօրյա
69		Իջևան	Իջևան, Գետահովիտի մայրուղու աջ մաս	շուրջօրյա
70			Արցախի 10	շուրջօրյա
71		Նոյեմբերյան	գ.Հաղթանակ ջրային տնտեսության կոլցեվոյ	շուրջօրյա
72	Լոռի	Ստեփանավան	Մարշալ Բաղրամյան 180 բ	շուրջօրյա
73		Տաշիր	Կիրովի 3 լցակայան «7 7 7»	շուրջօրյա
74		Վանաձոր	Հալաբյան 2ա	շուրջօրյա
75			Բաղրամյան փողոց 58	շուրջօրյա
76			Կարեն Դեմիրճյան 25	շուրջօրյա
77			Կարեն Դեմիրճյան 1Բ-1	շուրջօրյա
78			Երևանյան 62 Բ	շուրջօրյա
79			Նարեկացի 15 ա/1	շուրջօրյա
80		Սպիտակ	Երևանյան խճ. աջակողմյան մասում	շուրջօրյա
81		Ալավերդի	Երևանյան խճ 18	շուրջօրյա
82	Արարատ	Մասիս	քաղաքապետարանի մոտ	շուրջօրյա
83		Արտաշատ	ք.Արտաշատ Երևանյան փող. վերջնամաս	շուրջօրյա
84		Մասիս	Մասիսի շրջ. գ.Մարմարաշեն, դպրոցի դիմաց	շուրջօրյա
85		Արարատ	Արտաշատ-Երևան մայրուղի	շուրջօրյա
86	Վայոց Ձոր	Վայք	Երևան-Մեղրի մայրուղու 144կմ	շուրջօրյա
87			Պանրի գործարանի հարևանությամբ	շուրջօրյա
88		Ջերմուկ	Ջերմուկի ձախափնյա խճուղի	շուրջօրյա
89			ք. Ջերմուկ, Երևանյան 11	շուրջօրյա
90		Եղեգնաձոր	Երևանյան խճուղի (նախկին սովխոզի գարաժ)	շուրջօրյա
91		Գորիս	Անկախության 118	շուրջօրյա
92		Քաջարան	Քաջարան մտնելիս աջակողմյան հատվածում Վարոյի ԲԼԿ	շուրջօրյա
93		Կապան	ք.Կապան, Մուշեղ Հարությունյանի 4	շուրջօրյա
94			Գործարանային փող. օդանավակայանի ավտոկայանի հարևանությամբ	շուրջօրյա

95	Սյունիք	Մեղրի	ք. Մեղրի , Ադելյան 7 , պատասխանատու՝ Զաքարյան Սամվել հեռ.՝ 093-38-10-89	շուրջօրյա
96			ք. Մեղրի, Մեղրիից Ագարակ տանող ճանապարհ Գարեգին Նժդեհ 122 պատասխանատու Սերգեյ	շուրջօրյա
97		Սիսիան	Չարենցի 8ա	շուրջօրյա
98		Էջմիածին	Իսակովի պողոտայով էջմիածին մտնելիս դեմ-դիմացի լցակայաններ	շուրջօրյա
99	Արմավիր	Վաղարշապատ	Էջմիածին-Երևան մայրուղի թիվ 2	շուրջօրյա
100		Արմավիր	Երևանյան 52	շուրջօրյա
101			Փարաքար-Թաիրով	շուրջօրյա
102			Փարաքար-Թաիրով, Մայրաքաղաքային 33	շուրջօրյա
103			գ. Նորապատ	շուրջօրյա
104		Բաղրամյան	Մայրուղու աջակողմյան մաս	շուրջօրյա
105	ԼՂՀ	ք. Ստեփանակերտ	Բաղրամյան 1/1	շուրջօրյա
106		ք. Ասկերան	Կամոյի նրբանցք 23	շուրջօրյա
107		ք. Մարտունի	Ազատամարտիկների 120	շուրջօրյա

Հավելված N 2
<<21 >> << ապրիլի>> 2017թ. կնքված
N ***ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/2.1*** *ծածկագրով գնման պայմանագրի*

ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 2017թ.				Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը	II եռամսյակ		III եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Բենզին, ռեգուլյար	լիտր	337	**40523**	**13656251**	**131200**	**44214400**	**171723**	**57870651**
Ընդամենը				X	**13656251**	X	**44214400**	X	**57870651**

ԳՆՈՐԴ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 1 փող
«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001996600100
ՀՎՀՀ 02614085
էլ. հասցեն tender@cps.am
Հեռ. (010)540911,(010)526746

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
<<21>> << ապրիլի>> 2017թ. կնքված
N ***ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/2.1*** *ծածկագրով գնման պայմանագրի*

ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ապրանքի անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում									
		ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Բենզին <<Ռեգուլյար>>				**13656251**	**13656251**	**13656251**	**57870651**	**57870651**	**57870651**	**57870651**

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով*

ԳՆՈՐԴ

ՀՀ քննչական կոմիտե
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5
ՀՀ ՖՆ աշխատակազմի
գործառնական վարչություն,
Հ/Հ 900011000834
ՀՎՀՀ 02631263

(ստորագրություն)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Սի Փի Էս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ
ք. Երևան, Պուշկինի 1 փող
«Պրոմեթեյ բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660001996600100
ՀՎՀՀ 02614085
էլ. հասցեն tender@cps.am
Հեռ. (010)540911, (010)526746

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
<< 21 >> << ապրիլի>> 2017թ. կնքված
N ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀՔԿԴ-17/2.1 ծածկագրով գնման պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
<< 21 >> << ապրիլի>> 2017թ. կնքված
N ***ՇՀԱՊՁԲ-15/1-ՀՀԲԿԴ-17/2.1*** *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ----------ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
----------ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ------- -ին կնքված N ----------
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ---------- -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն